

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Դ. Դ. ՕԴԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկածու, դոցենտ,
ԳԴՀ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ*

Հայ գրերի գյուտից հետո Հայաստանում տարածում գտան հայալեզու դպրոցները: Սակայն օտար ոսոխների կրկնվող բարբարոսությունները դարերի ընթացքում վատ են անդրադարձել դպրոցների բնականոն գործունեության վրա: Այս առումով որոշ բացառություն են կազմել Սյունյաց դպրոցները, որոնք աշխարահագրական առումով համեմատաբար անմատչելի են եղել օտար նվաճողներին: Սյունիքում հայ դպրության ավանդույթների պահպանման առումով աչքի ընկնող դպրոց է եղել Շաղատի բարձր տիպի դպրոցը, որն իր գոյությունը պահպանել է մինչև 9-րդ դարը¹: 10-րդ դարի սկզբներին քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով Սյունյաց դպրոցավարդապետարանը փոխադրվել է Տաթև, որը շրջապատված էր բարձր, սրածայր լեռներով և Որոտան գետի անդնդախոր ծորով: Ըստ Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ 895թ. կառուցվել է Տաթևի մեծ եկեղեցին՝ դառնալով Սյունյաց աշխարհի հոգևոր կենտրոնը: Դպրոցի համբավը տարածվել է ողջ երկրով մեկ: Այստեղ են ուսանել տարբեր վայրերից ժամանած ուսումնաստեչ շատ երիտասարդներ՝ կրոնի, փիլիսոփայության, երաժշտության, քանդակագործության, նկարչության, քերականության, երկրաչափության, մանկավարժության, գրչության արվեստի, ոսկերչության մեջ խորանալու նպատակով և այլն²:

Տաթևի դպրոցը հայոց առաջին դպրոցներից էր, որը շեղվեց միջնադարյան դպրոցներին բնորոշ քարացած գործելակերպից և սկսեց ավանդել ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ, բնական ու համարողական գիտություններ: Վանքը ունեցել է հյուրանոց, դպրոց, գրապահոց, գրատուն և այլն: Ինչպես մյուս, այնպես էլ Տաթևի դպրոցը, որը տարբեր ժամանակներում հիշվել է իբրև «վարդապետարան», «լսարան», «ուսումնարան» և «համալսարան», բոլոր ժամանակներում չէ, որ կարողացել է պահպանել իր համբավը: Սիս թե ինչու դպրոցն ունեցել է իր վերելքների ու վայրէջքների շրջանները: 13-րդ - դարի կեսերից մինչև 15-րդ դարի կեսերը բնորոշվում են Տաթևի դպրոցի ծաղկումը շրջանով, որը սկզբնավորվեց մեծ գիտնական Հովհաննես Որոտնեցու

¹ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 94:

² ՀՍ Հանրագիտարան, Երևան, 1985, հատոր 11, էջ 542:

ռեկտորության տարիներին³: Նա վերականգնել է Տաթևի կրթարան-վարդապետարանը՝ դարձնելով այն բարձր տիպի դպրոց, համալսարան: Որոտնեցու աշակերտները սրբացրել են նրան՝ անվանելով «զերիմաստ» փիլիսոփա, հմուտ գիտնական, դասախոս: Իր ուսուցչին առանձնապես մեծարել է նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին՝ անվանելով «ամմար արև», «երանելի վարժապետ հայոց» և այլն⁴:

Որոտնեցին եղել է նոր դպրոցի հիմնադիր, նրա մանկավարժական նորարարություններից մեկն այն էր, որ նա համալսարանի ուսման բովանդակությունը հարստացրեց աշխարհիկ գիտություններով՝ փիլիսոփայություն, տրամաբանություն, քերականություն, պոետիկա, պատմություն, մարդակազմություն, տարրաբանություն, արհեստներ (թուղթ «կոկել», մագաղաթ, թանաք պատրաստել, գիրք կազմել և այլն):

1388-1409 թթ. համարվում են Տաթևի համալսարանի ամենածաղկուն շրջանը, որը համընկնում է Գրիգոր Տաթևացու ռեկտորության տարիներին: Համալսարանը ունեցել է երեք ֆակուլտետ՝ երաժշտության, նկարչության, արտաքին ունեռքին գիտությունների⁵: Տաթևացին ոչ միայն շարունակել ու զարգացրել է համալսարանի ավանդույթները, այլև կատարելագործել է ուսումնասիրվող առարկաների ծրագրերը, կազմել դասագրքեր, նոր շունչ հաղորդել գրչության արվեստին, դասավանդման մեթոդաբանությանը: Նա իր էությանը եղել է փիլիսոփա, մանկավարժ, աստվածաբան, կրոնական ու հասարակական մեծ գործիչ: Որպես ուսուցչապետ՝ աչքի է ընկել գործընկերների նկատմամբ իր պահանջկոտությամբ՝ ունենալ լուսավոր միտք և անբասիր վարք, օրինակ ծառայել սովորողների համար:

Տաթևի և այլ բարձր տիպի դպրոցներում նա վարել է փիլիսոփայության աստվածաբանության, քերականության, տրամաբանության, ճարտասանության, բնագիտության, գրչության արվեստի և այլ դասընթացներ: Գրել է շատ դասագրքեր՝ «Գիրք հարցմանց», «Քարոզագիրք», «Ոսկեփորիկ», «Խրատ գրչության», «Սահմանադրություն դաստիարակության», կրոնափիլիսոփայական շատ ստեղծագործություններ⁶:

Տաթևացու աշակերտ Մաթևոս Ջուղայեցին դիպուկ է բնութագրել իր ուսուցչին. «անդադար ընթերցող, անպարապ գրող, աղքատասեր և օտարասեր, հոգով խոնարհ, մտքով ստեղծագործող, հասակով բարձր, դեմքով պայ-

³ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 103:

⁴ Նույն տեղում, էջ 105:

⁵ Նույն տեղում, էջ 131:

⁶ Սիմոնյան Յ., Ակնարկներ հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 67:

ծառ...»: Իսկ Թովմաս Մեծփեցին ընդգծել է ունկնդիրներին գրելու նրա ճոխ լեզուն, գեղեցիկ բարբառներով խոսելու հմտությունը⁷:

Տաթևացին ոչ միայն բազմակողմանի զարգացած գիտնական էր ու մեծ ուսուցչապետ, այլև անվանի արվեստագետ, նկարչության ու երաժշտության գիտակ⁸: Եվ պատահական չէ, որ նրա աշակերտներից շատերը հպարտացել են իրենց մեծ ուսուցչով, ով մեծ հեղինակություն է ունեցել ոչ միայն հայ դպրության, այլև երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Տաթևացին ունեցել է բազմաթիվ կոչումներ՝ մատենագիր, վանական, նկարիչ, բայց ամենից շատ սիրել է վարժապետական կոչումը: Ունենալով շուրջ կեսդարյա գիտակրթական գործունեության մեծ փորձ՝ բնականաբար հետաքրքրություն են ներկայացնում Տաթևացու մանկավարժական հայացքները, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: Իր աշակերտների վկայությամբ՝ նա եղել է արտակարգ դասախոս, քաղցրախոս ու հմուտ գիտնական: Ինչպես վկայում է Առաքել Սյունեցին, նա ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվել իր կարողացած դասախոսություններին, օգտագործած մեթոդներին, որպեսզի աշակերտները ամնոռաց յուրացնեն թեմաները⁹: Մասնավորաբար կարևորել է հարց ու պատասխանի մեթոդը՝ հետադարձ կապ հաստատելով սովորողների հետ: Նրա խոսքը եղել է գեղեցիկ ու ճարտար, կարողացել է գերել ու գայթակղել իր սաներին. «Աշխարհս ամենայն կարօտ էր լսել զբանս բերանոյ նորա...»¹⁰:

Նա այնքան է մեծարել իր ուսուցչին, որ գովերգել է անգամ չափածո տողերով.

«Ձմեռ վարդապետն իմ դաս ասած, ...

Գրիգոր անուն պատճառ բարևաց...

Ձմեռ վարժապետն իմ հանճարեղ...»...

Իր աշակերտների վկայությամբ՝ Տաթևացին պահանջում էր գործընկերներից ուսումնառությունը սկսել պարզից, հասկանալիից, ապա անցնել բարդ թեմաների, անցկացնել կրկնություններ, հարց ու պատասխանի միջոցով ամրակայել գիտելիքները՝ սովորողներին պահելով ուշադրության կենտրոնում¹¹: Այդ մոտեցմամբ է գրվել «Գիրք հարցմանացը», որը համրագիտական արժեք

⁷ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 127:

⁸ ՀԱ Հանրագիտարան, Երևան, 1977, հատոր 3, էջ 233:

⁹ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 140:

¹⁰ Նույն տեղում, էջ 141:

¹¹ Նույն տեղում, էջ 141:

ունեցող ստեղծագործություն է՝ «աշխարհական խոսից հարմարեալ...»՝ շարադրված պարզ ու հակիրճ ոճով, առանց բարբառների ու օտարազգի բառերի չարաշահման, մի բան, որը ընդունված է եղել այդ շրջանում¹²։

Այդ դասագրքով նա պատասխանել է իր աշակերտների բոլոր հարցերին՝ հենվելով տրամաբանելու հայտնի մեթոդի վրա (համեմատել, չափել, դասավորել, կշռադատել...)։ Նույն մոտեցումը ցուցաբերել է նաև «Ոսկեփորիկ» գիրքը գրելիս, որը նույնպես մանկավարժական մեծ արժեք ներկայացնող գործ է։ Նրա ուշադրությունից չի վրիպելուսուցումը երեխաների տարիքային ու մտավոր կարողությունների համաձայն կազմակերպելու խնդիրը, որը մանկավարժական նկատառումներով արժեքավոր պահանջ է և ելնում է ուսուցման մատչելիության սկզբունքից։

Մեծ ուսուցչապետը հավասարապես մտահոգվել է նաև աշակերտների դաստիարակության հարցերով, որոնք քննարկել է կյանքի պահանջներին համընթաց, սովորողների տարիքային առանձնահատկություններից ելնելով։ Ընդգծել է, որ դաստիարակությունը չարն արգելող, բարին սերմանող զորեղ միջոց է, որ դաստիարակությունը անավարտ թողելը հանցագործություն է¹³։ Դաստիարակության մեթոդներից օգտագործել է զրույցը, համոզելը, խրախուսելը, դրական օրինակը, պարսավելը և այլն։

Ծնողներից և իր գործընկերներից պահանջել է նախատել ծուլերին մինչև ուղղվելը, վարժեցնել երեխաներին գյուղատնտեսության և արհեստների մեջ, որ աշխատանք կատարող աշակերտը բարիք է ստեղծում՝ զերծ մնալով գողություն կատարելուց¹⁴։

Տաթևացին դեմ էր երեխաներին պատժելուն՝ բացի առանձին դեպքերից, երբ չպետք է ցուցաբերել ավելորդ բարյացակամություն ու թուլություն։ «Անգիջողությունը կարևոր է դաստիարակության մեջ»¹⁵։ Նկատենք, որ այս շրջանում դպրոցներում հարգի էր դաժան ծեծը, որից ինչ-որ չափով խուսափել է Տաթևացին՝ չընկնելով ծայրահեղությունների գիրկը։

Կարևորելով դաստիարակության դերը սաների կյանքում՝ Տաթևացին ընդգծել է, որ դաստիարակությունը կարող է «զորություն» տալ կամ սպանել մարդուն։ Նա ըստ արժանվույն է գնահատել դաստիարակության ուղղվածության խնդիրը, որն արդիական հնչեղություն ունեցող հարցադրում է։ Պա-

¹² Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 144։

¹³ Սիմոնյան Ց., Ակնարկներ հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 69։

¹⁴ ՀՍ Հանրագիտարան, Երևան, 1977, հ. 3, էջ 222։

¹⁵ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 153։

խարակել է ծուլության, շատախոսության ու թափառաշրջիկ կյանք վարելու ամեն մի դրսևորում: Բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են բարությունը, ազնվությունը, պարկեշտությունը, մարդու խոսքի ու գործի միասնության պահպանումը, որոնք համամարդկային արժեքներ են, եղել են Տաթևացու դավանանքը:

Անձի բարոյական դաստիարակության հարցերը խորությամբ են քննարկված նրա տարբեր ստեղծագործություններում, որոնք հիմնականում ունեն արդիական հնչեղություն: Գտնում էր, որ մարդն ունի «բնական» և ձեռքբերովի հատկություններ, որոնք կարելի է զարգացնել դաստիարակության միջոցով: Մեծ պահանջներ է ներկայացրել ուսուցչին, որը պետք է մանկանը հեռու պահի վատից և «պարտական է ուսուցանել նրան լավը»¹⁶: Սակայն Տաթևացին չի խորացել պատանու բնավորության մեջ նկատվող վատ սովորություններ ծնող պատճառների բացահայտման հարցերում:

Կարևորել է մանկանը վաղ հասակից կրթելու գաղափարը, քանի որ նրա զգայարարները զգայուն են արտաքին աշխարհի նկատմամբ: Հոգեբանամանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում անգլիացի մեծ փիլիսոփա-մանկավարժ Ջոն Լոկի այն հայտնի դրույթի մասին, որ նորածնի հոգին նման է «անգրել տախտակի», որի վրա գրում է բնությունը: Մինչդեռ Տաթևացին այդ գաղափարին հանգել է նրանից շուրջ 300 տարի առաջ. մանկան հոգին ի ծնե «անգիր պնակիտ է կամ լվացած մագաղաթ, ինչ որ գրեն նրա վրա, այն էլ կվերցնի»¹⁷:

Նա մի կողմից գիտնական էր, մյուս կողմից՝ հոգևորական: Ահա թե ինչու իրերի ու երևույթների միջև եղած կապերին տալով հիմնականում օբյեկտիվ մատերիական բացատրություն՝ երբեմն դիմել է նաև գերբնական ուժերի զորությանը, որը հետևանք է միջնադարյան խավարի ազդեցության: Ահա թե ինչու դաստիարակության առանձին հարցերում նա գտնում է, որ երեխաները պետք է լինեն «...հեզ, խոնարհ, հնազանդ, համդարտ, համբերող, երկյուղած ու ամոթխած»¹⁸: Իսկ կանանց դաստիարակության հարցում ունեցել է հետադիմական հայացքներ՝ նրանց համարելով «կես մարդ», որոնք պետք է զբաղվեն երեխաների դաստիարակությամբ և ընտանեկան հոգսերով¹⁹:

¹⁶ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 154-155:

¹⁷ Օհանյան Հ., ԳՊՀ գիտական հոգվածների ժողովածու, Երևան, 2013, N15, էջ 774:

¹⁸ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 154-156:

¹⁹ Սիմոնյան Յ., Ակնարկներ հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 70:

Տաթևացու մանկավարժական հայացքներում պատշաճ տեղ է հատկացվել երեխաների տարիքային շրջաբաժանման խնդրին, որը ուսուցման կազմակերպման կարևոր գործոններից է և ելնում է մատչելիության սկզբունքից. «երեխայություն, մանկություն, պատանեկություն, երիտասարդություն...»: Ճիշտ է՝ ժամանակակից ըմբռնմամբ նրա շրջաբաժանումը հեռու է ընդունելի լինելուց, բայց դա չի նսեմացնում իր ժամանակի մեծ գիտնականի ու մանկավարժի վաստակը հայ մանկավարժական մտքի պատմության մեջ՝ որպես այդ գաղափարի առաջադրողներից մեկի: Պատահական չէ, որ հայ առաքելական եկեղեցին, ըստ արժանվույն գնահատելով նրա մեծությունը, Տաթևացուն դասել է սրբերի շարքը:

***Բանալի բառեր** - ուսուցչապետ, դպրություն, ուսուցում, մանկավարժ, վարժապետ, մատենագիր, համալսարան, դպրոց-վարդապետարան, դպրություն, արվեստ, մազադաթ*

THE PEDAGOGICAL VIEWS OF GREGORY OF TATEV

H. H. OHANYAN

Candidate of Philological Sciences, Assistant Professor, GSU Professor

The article is devoted to the elucidation of the pedagogical views of the 14-th century Armenian Apostolic Church's distinguished priest, philosopher-naturalist, educator, Gregory of Tatev. Many of his views have not lost their relevance by now. The big role of the master in the establishment of the University of Tatev is emphasized in this article.

ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ГРИГОРА ТАТЕВАЦИ

А. Г. ОГАНЯН

Кандидат педагогических наук, доцент, профессор ГГУ

Статья посвящена освещению педагогических взглядов известного церковнослужителя Армянской апостольской церкви, философа Григора Татеваци, актуальность работ которых до сих пор не утрачена. Подчеркнута его роль в становлении Татевского университета.